ՊԱՇՏՕՆԱԿԱՆ

(ՍԻՆՕԴԻ ՕՐԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐԻՑ ՔԱՂՈՒԱԾ)

ՎԱՐՉԱԿԱՆ.

28-Ն Դեկտեմ. Սինոդը ի նկատի ունելով Գեր. Յովակիմ եպիսկոպոսի հրաժարականը ծախսարարութիւնից, և տեսնելով թէ դժուար է մի ծախսարարի ձեռքով կառավարել Մայր Աթոռոյս տնտեսական բոլոր գործերը, որոշեց վերահաստատել վանքական կառավարութիւնը և նշանակեց Արժ. Սարգիս վարդապետ Տէր Գասպարեանին՝ նախագահ վանքական կառավարութեան, իսկ Արժ. Հարց՝ Գրիգոր վարդապետ Տէր Ստեփանեանին և Անտոն վարդապետ Վարդազարեանին՝ անդամ.

—

28 Դեկտեմ. Սինոդը ի տեղի Արժ. Անտոն վարդապետի Վարդազարեան՝ վանքի ագարակի վերակացու նշանակեց Արժ. Ստեփան վարդապետ Մելիք Դաւթեանին.

—

30 Դեկ. Սինոդն ի նկատի ունելով Աստրախանի թեմի կառավարիչ Գեր. Սուքիաս եպիսկոպոսի անցեալ Նոյեմբ. 14-ին № 171 յայտարարութիւնը, որոշեց թոյլ տալ Աստրախանայ Հայոց Կոնսիստորիային երեք ամեայ ժամանակաւ երեք երեք հաշուետեսներ կարգել՝ իւրաքանչիւր ամիս երեսփոխանական ել և մուտքը զննելու համար.

ԴԱՏԱՍՏԱՆԱԿԱՆՔ

18 Նոյեմբերի Սինոդը ի նկատի ունելով Թիֆլիզի Կոնսիստորիայի անցեալ 1883 թուի Յունիսի 8-ին № 1696 յայտարարութիւնը, որոշել է դադարեցնելով քահանայագործութիւնից վեց ամսեայ ժամանակով եկեղեցական ապաշխարանքի ենթարկել Թիֆլիզու Նորաշէն Եկեղեցու միաբան Յովսէփ քահանայ Մամուլեանին. այդ ապաշխարանքը կատարելու է յիշեալ քահանայն ժամերգութեանց ժամանակ փիլոնով Սաղմոս ի ձեռին Նորաշէնու Եկեղեցու հիւսիսային դրան մօտ կանգնելով, քաւելու իւր յանցանքը, որով մեղանչել է եկեղեցու աւագ քահանայի և այլոց դէմ և իւր կոչման անվայել կերպով վարուելով դէպ ի եկեղեցական արարողութիւնները. իսկ մետրիքականում անվայել արձանագրութեան համար որոշել է ենթարկել յօգուտ որբոց և այրեաց վիճակին մի հարիւր ռուբլի տուգանքի, որ կանխիկ պէտք է վճարէ, ի հակառակ դէպս երկարացնել ապաշխարանքը մինչև տուգանքի վճարելը.

Ի ՏՊԱՐԱՆԻ ՍՐԲՈՑ ԿԱԹՈՂԻԿԷ ԷՋՄԻԱԾՆԻ Ի ՎԱՂԱՐՇԱՊԱՏ.